

եղայ տեսած գորգերուս անկարեւորութեան համար: Հոն գորգեր փոռած էին խորանին առջեւ եւ այլուր, սակայն փոքր արժէքով, նորագոյն շրջանի, հետաքրքրութենէ զուրկ գորգեր: Աւելի հետաքրքրական են Սաղէմի մեր վանքին քանի մը հին գորգերը, մասնաւոր հատ մը մետաքսեայ, ժԼ դարէն, հայերէն արձանագրութեամբ՝ որուն մասին արդէն իր կարգին խօսեցանք:

Գորգերը ընդհանուր գործածութենէ զատ՝ մասնաւոր կերպով զանազան արարողութեանց ատեն ալ գործածուած են հայ եկեղեցիներուն մէջ: Tavernier թէ դարուն էջմիածնի պողաճաւաք եպիսկոպոսի մը մահուան մասին խօսելով՝ կը վկայէ որ անոր մարմինը Ս. Ստեփաննոսի (Արտաղի Ս. Թադէոսը արդեօք Յ. Ք.) վանքը կը բերուի եւ «մարմինը եկեղեցիին մէջ գետինը սփռուած գորգի մը վրայ դրուեցաւ, երեսը դէպի խորան դարձած»⁽⁸⁵⁾, որ կը յիշեցնէ 1273ին Սմբատ Օրբելեանի թաղումը:

Շուէտացի բժիշկ Frederick Hasselquist 1750ին Զմիռնիոյ Հայոց եկեղեցիին մէջ ոտնւռայի արարողութեան ներկայ կ'ըլլայ եւ կը նշուի որ «քահանան նստած էր գորգի վրայ»⁽⁸⁶⁾:

Ստեփ. Օրբելեան կը վկայէ որ Հայ եկեղեցական աստիճաններու եւ պատիւին մէջ գորգերը իրենց որոշ տեղը ունէին: Ըստ իր պատմութեան՝ Անիի Տէր Սարգիսը 1019 թուականներուն Սիւնեաց առաջնորդ կը կարգէ Տէր Յովհաննէսը: Վերջինս Սիւնեաց եւ Բաղայ Վասակ թագաւորէն Անի կը ղրկուի՝ խնդրելու համար որ Տէր Սարգիսը վերստին Տէր Յովհաննէսին շնորհէ «զաստիճան մետրապօլիտութեան եւ զպատիւն զոր ունէին՝ զիսչն որ առաջի ընթանայր եւ զգաւազանն եւ զբաղմականն զոր բարձեալ էր Տէր Անանիա (կաթողիկոսը) վասն զայթակղելոյն Յակոբայ (Սիւնեաց առաջնորդ)»⁽⁸⁷⁾: Տէր Սարգիս կը կատարէ խնդրանքը, «ընձեռն նմա հայրապետն զսեպհական խաչն Սիւնեաց եւ զոսկէտտուն վառն եւ զմեծազին գաւազանն եւ զպատուական զահոյս բաղմականին, զորս պահեալ էին ի սենեկին սրբաբանի հայրապետանոցին»⁽⁸⁸⁾: Անտարակոյս «զահոյս բաղմականին» մէկ նըշանակութիւն ունի, որ է՝ առաջնորդական կամ եպիսկոպոսական գահին գորգը: Իսկ վկայութեան վերջին մասը կը յիշեցնէ Ուխտանէսի վկայութիւնը, թէ «գարկանելի (գորգ) քահանայից եւ սարկաւազաց» կը պահուէին հայրապետական գանձատունը: Օրբելեան իր վկայութիւնը կը հաստատէ Տէր Սարգիսի Վասակի դրած թղթով, ուր կը յիշուի թէ «վերստին աւանդեցաք զմա (Տէր Յովհաննէսի) զնախնա-

⁽⁸⁵⁾ Collections of Travels. — London, Vol. I. 18.

⁽⁸⁶⁾ Voyages and Travels in the Levant 1749-52. — London, 1766, p. 45. C. B. Elliot Անգլիացին 1838ին Ազհիսար Հայոց եկեղեցին կ'այցելէ, ուր «քահանայ մը նստած էր գորգի մը վրայ, իր լեզուով Աւետարան կը կարդար, երկու մարդ եւ քանի մը տղաք ներկայ էին»: (Travels. — London, 1838, vol. I. p. 112).

⁽⁸⁷⁾ Պատմ. նահգ. Սիւսական. — Թիֆլիս, 1911, էջ 303:

⁽⁸⁸⁾ Անդ, էջ 304: